



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 52 68 44

ֆաքս (+ 374 10) 52 68 44

էլ. փոստ info@moh.am

ՉՑ. 10. 2014 N 11/222/11301 - 14

Ձեր N \_\_\_\_\_

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» Հ/Կ-Ի ՆԱԽԱԳԱՀ,

«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ

ՊԱՐՈՆ ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ի պատասխան Ձեր 2014 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ հ-86-հ-4 գրության հայտնում եմ, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին:

ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կենտրոն) հայտատուների հետ կնքում է «Փորձագիտական ծառայությունների մատուցման» պայմանագիր, որում հստակ սահմանվում է Կենտրոնի պարտավորությունը ինչպես փորձագիտական աշխատանքների ընթացքում, այնպես էլ դրա ավարտից հետո առանց հայտատուի նախնական համաձայնության չբացահայտել և երրորդ անձանց չտրամադրել իրեն տրամադրված տեղեկատվությունները: